ՆԱԻՐԻ
ինշուրանս

WHO WE ARE? →

NAIRI insurance

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Ողջույն, մենք ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍՆ ենք:

Այս տարի մենք արդեն 25 տարեկան ենք դառնում:

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Մենք արդեն երկար տարիներ է՝ հայաստանյան ապահովագրական շուկայում լավագույն եռյակում մեր կայուն դիրքն ունենք:

Այս եռյակում մենք միակ ազգային ընկերությունն ենք:

Մեր երկու գլխավոր մրցակիցներն ունեն ռուսական կապիտալ:

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Մեկ հեր ապահով 5



ԱՊՊԱ

Մեր երկրում առաջնային դիրքերում է դեռևս պարտադիր ապահովագրությունը՝ ԱՊՊԱ-ն:

Ըստ փորձագետների՝ իրավիճակը մոտ ապագայում փոխվելու է:

Այս գործընթացում մեր ընկերությունը փորձում է միշտ մեկ քայլ առաջ գնա:

ՆԱԻՐԻ Ինշուրանսը մեծ ուշադրություն է դարձնում առողջության ապահովագրությանը:

Մենք նպատակ ունենք մեր երկրում ներդնել և զարգացնել հանրային առողջության պահպանման մշակույթը:

Այսօր ընկերության բժշկական ապահովագրության փաթեթ ունեցող հաճախորդների թիվը գրեթե 45.000 է, ինչը բացառիկ ցուցանիշ է մեր երկրի համար:

ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ շուկայում ներկայանում է նաև բացառիկ առաջարկներով՝ պարբերաբար թարմացնելով և համալրելով ապահովագրական ծրագրերի ցանկը:

Այսպես մենք առաջինն էինք շուկայում, որ դեռ նախորդ տարվա ամռանը մշակեցինք կորոնավիրուսից ապահովագրություն ճամփորդողների համար՝ Anti Covid Travel:

Մենք նաև առաջինն ենք շուկայում, որ մշակել ենք առողջության ապահովագրության փաթեթ հատուկ կանանց համար՝ Best Women:

Մենք ուսումնասիրում ենք շուկան, վերհանում քաղաքացիների կարիքներն ու պահանջմունքները, խնդիրները և մշակում հատուկ փաթեթներ՝ ուղղված այդ կարիքներին:

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Սոցիալական պատասխանատվություն

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Մենք կարևորում ենք գործարարի սոցիալական պատասխանատվությունը:

Հավատում ենք, որ յուրաքանչյուր ընկերություն պարտավոր է իր հաջողության մի մասը վերադարձնել հասարակությանը:
Մենք հաճախ ենք մասնակցում տարբեր բարեգործական, սոցիալական ձեռնարկների՝ գումար տրամադրելով, օրինակ, վիրավոր զինծառայողի արտերկրում բուժման համար, սահմանամերձ և/կամ գյուղական բնակավայրերում մարզական դահլիճների, խաղահրապարակների կառուցմանը և այլն:
Արցախյան վերջին պատերազմի առաջին օրերին ՆԱԻՐԻ-ն միացել է համազգային ձեռնարկին՝ օգնելու առաջնագծին, Արցախին ու արցախցիներին: Մենք պարբերաբար մեծ քանակությամբ առաջին անհրաժեշտության պարագաներ, սնունդ, դեղօրայք ենք ուղարկել առաջնագիծ:
Հյուրընկալել ենք նաև 200-ից ավելի արցախցիների՝ մեկ ամսից ավելի հոգալով նրանց ոչ միայն կեցության, այլև սնունդի ծախսերը, նրանք տրամադրել բուժօգնություն, նաև հոգեբանական աջակցություն և այլն:
Մենք դա չենք արել, որովհետև մենք այդքան լավ ենք: Մենք դա արել ենք, որովհետև դա բոլորիս պարտքն է:

ՆԱԻՐԻ
ինշուրանս

2021 թվականը մենք սկսեցինք նորովի՝ վերաբրենդավորված:

Նոր ՆԱԻՐԻ՝ նոր գույներով, նոր տարբերանշանով, նոր կարգախոսով և նոր, հավակնոտ ծրագրերով:

Ու՞մ հետ ենք մեզ ամենից ապահով զգում՝ հարազատ մարդու, հավատարիմ ընկերոջ, լավագույն հարևանի կողքին:

Դրա համար էլ մենք ասում ենք՝ ՄԵԶ ՀԵՏ ԱՊԱՀՈՎ Է:

Մենք չենք ցանկանում լինել պարզապես ընկերություն, որին կդիմեք, երբ խնդիր առաջանա, դժբախտություն պատահի, կյանքում դժվարություն լինի. . . Մենք ցանկանում ենք լինել մեր հաճախորդի ընկերը, ում կողքին նա իրեն ապահով կզգա:



Մենք ցանկանում ենք լինել մեր հաճախորդներին ավելի մոտ:

Ավելի լավ հասկանալ նրանց կարիքները, պահանջներն ու ցանկությունները: Մենք ունենք լավ, պրոֆեսիոնալ, նպատակասլաց թիմ, որը պատրաստ է ամեն օր սովորել,փոխվել ու կատարելագործվել: Մենք այն ընկերությունն ենք, որը հավակնոտ նպատակ է իր առաջ դրել՝ ամեն օր լինել ավելի լավը:

Ընկերության նոր բրենդավորման գործում մեծ թիմ է մասնակցել

ներգրավվել են ինչպես տեղացի, այնպես էլ արտասահմանյան լավագույն մասնագետներ: Սա ուղղակի գունային կամ պատկերների փոփոխություն չէ:

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Նոր գույներն ու տարբերանշանն արտահայտում են այն սկզբունքը, որը դրվում է մեր աշխատանքի հիմքում՝

լինել ավելի մոտ, ավելի հասանելի, լինել ոչ թե պարզապես ընկերություն, այլ՝ ընկեր, որին վստահում ես ու գիտես՝ նա կողքիդ է ու անպայման իր ձեռքը կմեկնի, երբ կարիքն ունենաս:

Մենք ցանկանում ենք այնքան այնքան մոտ ու հարազատ լինել Ձեզ, որ մեր մասին խոսելիս ասեք՝ «Իմ Նաիրի»:

Այսպիսին է մեր նոր կայքէջի հասցեն՝ imnairi.am

Ընկերության թարմացված լոգոն իր մեջ պարունակում է ընկերության անվանման մեծատառը՝ N, հավաքված երկու տարբեր բաբըլներից:

Բաբըլները հաղորդակցության, մարդկային շփման խորհրդանիշ են: Նշանն ունի նաև երկրորդ ընթերցում՝ վահան, որը խորհրդանշում է պաշտպանվածություն:

Գույների ընտրությունը պատահական չէ. վառ գույները մի տեսակ հակադրվում են զուսպ ոլորտային գույներին. դա թույլ է տալիս ընդգծել ընկերության յուրահատկությունը, ճկունությունը, ֆորմալության բացակայությունը:

ՆԱԻՐԻ
ինշուրանս

“ Մեր կարգախոսն է՝

ՄԵԶ ՀԵՏ ԱՊԱՀՈՎ Է:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

Ընկերությունն ունի երկու գրանցված մասնաճյուղ Երևանում, մեկը՝ Վանաձոր քաղաքում, իսկ գործակալական ցանցի միջոցով ապահովագրական ծառայությունները հասանելի են ՀՀ և Արցախի ամբողջ տարածքում:

Իսկ հիմա այն մասին, թե ինչ է նշանակում լինել ՆԱԻՐԻ ընտանիքի մի մաս:

Մեր թիմում գնահատում են ազնվությունը, նվիրումն ու սովորելու, ամեն օր ավելի լավը դառնալու պատրաստակամությունը: Մեզ ամեն օր հիշեցնում են. «Մեր ընկերության հարստությունն աշխատողներն են. նրանք են կանգնած մեր բոլոր հաջողությունների և հաղթանակների հետևում»:

Մեր թիմում կարևորում են կարիերայի աճը. դու կարող ես մեր ընկերություն ոտք դնել կրտսեր մասնագետի հաստիքով, բայց շնորհիվ աշխատասիրության, գրանցած մասնագիտական աճի դառնաս բաժնի ղեկավար կամ էլ ավելին:

Օրինակ, մեր ընկերության ներկա գործադիր տնօրեն Մանե Մարտիրոսյանը մոտ 12 տարի առաջ աշխատանքի է ընդունվել որպես իրավաբան: Տարիների ընթացքում շնորհիվ իր աշխատասիրության, գիտելիքների, կատարելագործվելու հմտության մի քանի անգամ պաշտոնի բարձրացում ունեցել, ի վերջո, հիմա նա բուրգի վերևում է:

ՄԱՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

գործադիր տնօրեն

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Մենք կարևորում ենք անձի շարունակական զարգացումն ու կատարելագործումը, դրա համար էլ տարեկան մի քանի անգամ մասնագիտական վերապատրաստման դասընթացներ ենք անցկացնում:

Այստեղ ամեն բան արվում է, որպեսզի աշխատանքի գալը ոչ թե պարզապես պարտավորություն, այլ՝ հաճույք լինի:

Մենք հավատում ենք՝ երբ աշխատավայր հաճույքով ես ոտք դնում, բարձր տրամադրությամբ, աշխատանքի արդյունավետությունը մի քանի անգամ ավելի բարձր է:

Մեզ մոտ սովորական օրը կարող է տոն դառնալ: Աշխատավայրում մեզ սպասեն թարմ մրգերը, ծաղիկները: Դե իսկ տոն օրերը մեզ մոտ միշտ կրեատիվ ձևով են նշում: Վերջերս, օրինակ, մայիսի 1-ին ընդառաջ գարեջրախմության երեկո արեցինք:

Այս լուսանկարներն էլ պատմում են, թե ինչպես մեզ մոտ անցավ Գիրք նվիրելու օրը:
Մենք արդեն գիտենք՝ եթե առջևում տոնական որևէ օր է, ուրեմն մեր մարքեթինգի և մարդկային ռեսուրսների կառավարման բաժինները հետաքրքիր, յուրօրինակ մի բան են մտածում:

Մենք սիրում ենք նաև քաղաքից դուրս անցկացվող թիմ-բիլդինգները:
Օրինակ՝ մենք մեր փառատոնն ունենք՝ **Nairi Food Fest:**
Լուսանկարներում դուք տեսնում եք, ի դեպ, մեր ղեկավար անձնակազմին:
Փառատոնի ժամանակ նրանք պատրաստում էին, մենք գնահատում էինք:
Մեզ մոտ առիթը բաց չեն թողնում թիմին միավորելու համար:

Մեզ մոտ արտոնությունների մի ամբողջ փաթեթ է մշակվել, որը պարբերաբար համալրվում է և հարստացվում: Առանձնացած, աչքի ընկած աշխատակիցը պետք է գնահատվի ու պարգևատրվի:

Դրա համար մենք ունենք մեր ներքին արժույթը՝ «նիկոին»:

Յուրաքանչյուր աշխատակից կարող է կուտակել նիկոիններ՝ ցուցաբերելով նախաձեռնողականություն, ակտիվություն: Օրինակ, աշխատակիցը կարող է Նիկոին կուտակել անգամ ընկերությունում առկա թափուր աշխատատեղի համար լավ թեկնածու առաջարկելու համար:

Կուտակված նիկոիններն աշխատակիցը կարող է ծախսել ընտրելով մեր մշակած «փոխարժեքի» ցանկից իր նախընտրած տարբերակը՝ ստանալ նվերներ, ժամանցի վայրերի տոմսեր, անգամ՝ հանգստի հնարավորություն:

ՆԱԻՐԻ
ինշուրանս

Մենք սրտաբաց և հյուրընկալ թիմ ենք:

Այնպես որ, ՀԱՄԵՑԵՔ ՄԵՐ ԹԻՄ

ՆԱԻՐԻ
ինշուրանս

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ